

«Եւ ընդ օրհնութեանս ծանուցումն լիցի սիրելեացդ մերոց, զի յորժամ լուաք զբաւթալից համբաւն որ վասն խաւարմանս Արեւգականն մերոյ, յայնժամ կամէաք առ ձեզ գալ, յողջագուրել զշիրիմ սուրբ նշխարաց նորա, եւ ի մխիթարել զորբացեալ զորդիսդ նորա, բայց ոչ կարացաք գալ վասն դժուարութեան ճանապարհին, որ յաղագս ասպատակաց եւ աւաղակաց: Այլ ողբերգական եւ մխիթարական թուղթս գրեցաք՝ երիսնամակս եւ առաքեցաք առ ձեզ, թէպէտ ոչ կատարելագոյն, այլ դուզնաքեայ. զի կամիմք մեք ինքնին գալ եւ մխիթար(ել) զձեզ. թէպէտ անմխիթար է սուքն մեր: Բայց այժմ թողում պատգամաւորս եւ միջնորդս արկանելով, թէպէտ մեք ոչ կամեցաք զառաջինն, այլ սոքայ ժտելով ոչ միանգամ կամ երկիցս, այլ բազում անգամ առաքելով առ մեզ արս հաւատարիմս հանդերձ ձեռագրովք կնքելովք յամենայն ժողովրդենէ նոցա. եւ մեք տեսաք զշերմեռանդ սէրն եւ զկատարեալ զղջումն սոցա եւ ոչ կարացաք ընդդիմանալ սոցայ: Զի ես պատրաստեալ էի որ ձմեռս գայի յԱմիթ զՅայտնութիւնն ի մէջ ձեզ առնէի(*)».

(*) Այսինքն Սրապիոնի մահէն (1606 Ապրիլ 26) յետոյ առաջին Ծնունդը, որ էր 1607 Յունուար, եւ կը խոստանայ 1607ի Սեպտեմբերին հոն ըլլալ, Կ. Պոլիսը խաղաղեցնելէ յետոյ: Հ. Ներսէս Վրդ. Ակինեան չեմ գիտեր ինչո՞ւ այս Թուղթին թուականը կ'ենթադրէ 1608 եւ 1608 Դեկտեմբերին Կեսարացին Կ. Պոլիս հասած կ'ենթադրէ, մինչ, վաւերականօրէն 1607 Հոկտ. 25ին եւ 1608 Սեպտ. 10ին Կեսարացիին Կ. Պոլիս ըլլալը գիտենք: